ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԹԻՎ 106-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՊԻԼՈՏԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Ոստիկանության ծառայողների աշխատանքի արդյունավետությունը գնահատելու անհրաժեշտությունից, հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Պիլոտային կարգով հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության ծառայողների կատարողականի գնահատման

ցուցիչները՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համայնքային ոստիկանության ծառայողների կատարողականի գնահատման ցուցիչները՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության քրեական ոստիկանության ծառայողների կատարողականի գնահատման ցուցիչները՝ համաձայն N 3 հավելվածի,

4) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության գվարդիայի ծառայողների կատարողականի գնահատման ցուցիչները՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) «Ոստիկանության մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված գործառույթների բնույթով պայմանավորված՝ ոստիկանության ծառայողների ֆիզիկական և կրակային պատրաստականության վիճակի ստուգարքի արդյունքները, ոստիկանության ծառայողի կողմից ուժի ոչ իրավաչափ գործադրման դեպքերը և կարգապահական տույժերը հանդիսանում են սույն հրամանի 1-ին կետով պիլոտային կարգով հաստատված կատարողականի գնահատման ցուցիչների բաղկացուցիչ մաս,

2) սույն հրամանի 1-ին կետով պիլոտային կարգով հաստատված կատարողականի գնահատման ցուցիչներով ոստիկանության ծառայողների կատարողականի գնահատումն իրականացվում է կիսամյակային կտրվածով՝ թափանցիկության, չափելիության, օբյեկտիվության սկզբունքների հիման վրա,

3) սույն հրամանի 1-ին կետով պիլոտային կարգով հաստատված կատարողականի գնահատականը 95-100 միջակայքում համարվում է գերազանց, 70-94՝ լավ, 50-69՝ բավարար, 0-49՝ անբավարար:

3. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ–ներքին գործերի նախարարի տեղակալ Արամ Ղազարյանին՝ սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության ծառայողների 2025 թվականի 2-րդ կիսամյակի կատարողականի գնահատումը՝ համաձայն սույն հրամանի 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Մկրտչյանին:

5. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

29.12.2025թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի
«29» դեկտեմբերի 2025թ.
N 106-Լ հրամանի

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ

1. Ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում:
2. Քաղաքացիներից ստացված հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ ահազանգերին արձագանքման որակ:
3. Հանցագործությունների հայտնաբերում և բացահայտում:
4. Ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների արձանագրում, որոնց համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված է տուգանային միավոր:
5. Անհատական տեսախցիկի կրման կանոնների պահպանում:
6. Քաղաքացիների հետ հաղորդակցման հմտություններ:
7. Ճանապարհային երթևեկության կազմակերպման ապահովում:
8. Վարչարարության որակ:
9. Պարեկային ծառայության պատշաճ կազմակերպում:
10. Պարեկային ծառայության որակի բարելավում:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի
«29» դեկտեմբերի 2025թ.
N 106-Լ հրամանի

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ

1. Ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների բացահայտում:
2. Ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար հետախուզվող անձանց հայտնաբերում:
3. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի հայտնաբերում:
4. Հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի և այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառության դեպքերի հայտնաբերում:
5. Անչափահասների հանցավորության կանխարգելում:
6. Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի հայտնաբերում և բացահայտում, անհետաձգելի միջամտության որոշումների կայացում:
7. Պրոֆիլակտիկ (կանխարգելիչ) հաշվառման վերցված անձանց կողմից հակահիրավական վարքագծի կրկին դրսևորման դեպքերի կանխարգելում:
8. Համայնքային ոստիկանության իրավասության ոլորտում վարչական իրավախախտումների բացահայտում:
9. Վարչարարության որակ:
10. Ձերբակալված կամ կալանավորված անձանց իրավական ռեժիմի ապահովում:
11. Ձենքի և զինամթերքի շրջանառության վերահսկողություն, թույլտվությունների տրամադրում:
12. Համայնքային ոստիկանության ծառայության պատշաճ կազմակերպում:
13. Համայնքային ոստիկանության ծառայության որակի բարելավում:

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի
«29_» դեկտեմբերի 2025թ.
N 106-Լ հրամանի

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ

1. Առանձնապես ծանր և ծանր հանցագործությունների բացահայտում:
2. Առանձնապես ծանր և ծանր հանցագործությունների համար հետախուզվող անձանց հայտնաբերում:
3. Համակարգչային համակարգերի և համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտում:
4. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի հայտնաբերում:
5. Հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի և այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառության դեպքերի հայտնաբերում:
6. Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց, քրեական ենթամշակույթ կրող խմբավորումների մասնակիցների գործունեության հակազդման ուղղությամբ միջոցառումների արդյունավետություն:
7. Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերի հայտնաբերում:
8. Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հայտնաբերում:
9. Տնտեսական բնույթի հանցագորությունների հայտնաբերում:
10. Քրեական ոստիկանության ծառայության պատշաճ կազմակերպում:
11. Քրեական ոստիկանության ծառայության որակի բարելավում:

Հավելված N 4
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի
«29» դեկտեմբերի 2025թ.
N 106-Լ հրամանի

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ

1. Հասարակական կարգի պահպանություն և հասարակական անվտանգության ապահովում:
2. Հանցանքների, վարչական իրավախախտումների կանխում և խափանում:
3. Հանրային միջոցառումների (հավաքների, երթերի, մարզական ու մշակութային միջոցառումների, ընտրությունների և այլն) բնականոն ընթացքի ապահովում, ինչպես նաև դրանց մասնակիցների իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանություն:
4. Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց ուղեկցում:
5. Ատոմային էլեկտրակայանի և ռադիոակտիվ թափոնների պահպանություն և պաշտպանություն:
6. Պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանություն, ինչպես նաև հատուկ բեռների տեղափոխման անվտանգության ապահովում:
7. Դատավարության մասնակիցների պաշտպանության ապահովում:
8. Ռիսկայնության բարձր աստիճանի բարդ օպերատիվ իրավիճակներում հատուկ պատրաստվածություն և մարտավարական հմտություններ պահանջող գործողությունների և առաջադրանքների իրականացում:
9. Վարչարարության որակ:
10. Ոստիկանության գվարդիայի ծառայության պատշաճ կազմակերպում:
11. Ոստիկանության գվարդիայի ծառայության որակի բարելավում: